ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 24 » մարտ 2022 թ No 1226 – Ա

# ՍԵՐԲԻԱՅԻ «ՀԵՄՈՖԱՐՄ Ա.Դ., 26300, ՎՐՇԱՑ, ԲԵՈԳՐԱԴՍԿԻ ՊՈՒՏ ԲԲ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՀԵՄՈՖԱՐՄ Ա.Դ., 26300, ՎՐՇԱՑ, ԲԵՈԳՐԱԴՍԿԻ ՊՈՒՏ ԲԲ, ՍԵՐԲԻԱ») «ՀԵՄՈՄԻՑԻՆ, ԱԶԻԹՐՈՄԻՑԻՆ (ԱԶԻԹՐՈՄԻՑԻՆԻ ԴԻՀԻԴՐԱՏ), ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ, 250ՄԳ, 6(1X6)-ԱԿԱՆ ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵԱՏՄ 2016 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 78 որոշման 73-րդ կետը և «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 11.03.2022 թվականի N 0103029522 բացասական եզրակացությունը՝ Սերբիայի «Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկի Պուտ ԲԲ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկի Պուտ ԲԲ, Սերբիա») «Հեմոմիցին, Ազիթրոմիցին (ազիթրոմիցինի դիհիդրատ), դեղապատիճներ, 250մգ, 6(1x6)-ական բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20517 (000788) առ 11.03.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված չեն, մինչդեռ ԵԱՏՄ 2016թ. նոյեմբերի 03-ի թիվ 78 որոշման 73-րդ կետի համաձայն, եթե հայտատուն սահմանված ժամկետում չի ներկայացնում ճանաչող պետության լիազոր մարմնի (փորձագիտական կազմակերպության) կողմից պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները, ապա տվյալ ճանաչող պետությունում դեղի փորձաքննությունը և գրանցումը դադարեցվում է.

Ընդհանուր բաժին
№ 0982
25 MAR 2022
Կից ☐ Նշում

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Սերբիայի «Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկի Պուտ ԲԲ» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկի Պուտ ԲԲ, Սերբիա»)

Ստաց. 25.03.2022 ժ 14^00 ր

«Հեմոմիցին, Ազիթրոմիցին (ազիթրոմիցինի դիհիդրատ), դեղապատիճներ, 250մգ, 6(1x6)-ական բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետի պաշտոնակատար Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

24.03.2022

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157